ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հայոց լեզու և գրականություն առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Շուշանիկ Հարությունյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Շինուհայրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՊՉ-Ն, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ 5
2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ 9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականության հիմնավորում: Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն համախմբերի փոխլրացման պայմաններում: Հետևապես արժեհամակարգ հասկացությունը զուրկ է որոշակի ստուգությունից:

Այսպիսով՝ ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների՝ անձնային արժեքների վերաբերյալ պատկերացումները ներկայացնում են արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ, արժեքը՝ որպես հասարակության կենսագործունեության արդյունք:

Այդ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ.

ա) սոցիալական պայմաններ,

բ) անձի սոցիալականացման բնութագրիչներ,

գ) շարժառիթային ոլորտի առանձնահատկություններ,

դ) անձնային բնութագրիչներ:

Արժեհամակարգի ձևավորման և զարգացման համար հանրակրթության բնագավառում անփոխարինելի նշանակություն ունի դպրոցը, որը նպաստում է սովորողի ոչ միայն գիտելիքների աճին և զարգացմանը, այլև նրա՝ որպես հասարակության մեջ հանդես արժեքային հատկանիշների կրողի կերտմանը:

Այդ առաքելության կյանքի կոչման համար անգնահատելի է «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դերը:

Նպատակ և խնդիրներ: Սույն հետազոտության նպատակն է ցույց տալ դպրոցականների արժեքային համակարգի վրա գրականության ազդեցությունը առարկայի դասավանդման ընթացքում՝ ի հայտ բերելով այն գլխավոր առանձնահատկությունները, որոնք նպաստում են սովորողների բարոյական հատկանիշների, արժեհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը:

Պայմանավորված հետազոտության նպատակով՝ ծագում են հետևյալ խնդիրները.

ա) դպրոցականների շրջանում ուսումնասիրել արժեքային համակարգը,

բ) տալ արժեքային համակարգի գաղափարը, ներկայացնել արժեհամակարգի կարևորությունը դասաժամերին,

գ) գտնել միջոցներ և մեթոդներ,

դ) բացահայտել արժեքային համակարգի վրա ազդող գործոնները:

Օբյեկտ և առարկա: Հետազոտության օբյեկտը գրականության ազդեցությունն է դպրոցականների արժեքային համակարգի վրա առարկայի դասավանդման համատեքստում: Հետազոտության առարկան գրականության, մասնավորապես «Գրականություն» առարկայի դերն ու ազդեցությունն է 7-րդ դասարանի աշակերտների արժեհամակարգի ձևավորման ու զարգացման վրա:

Մեթոդներ: Հետազոտության նպատակին հասնելու համար հիմնականում կկիրառվի փաստաթղթերի վերլուծության մեթոդը *Հանրակրթական պետական չափորոշչի* (ՀՊՉ), առարկայական նոր չափորոշչի, ծրագրերի ու նոր դասագրքերի ուսումնասիրման և տվյալների ստացման միտումով:

1. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀՊՉ-Ն, ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԸ

Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակային հետևյալ բաղադրիչները.

1) գիտելիք,

2) հմտություն,

3) դիրքորոշում,

4) արժեք:

Հանրակրթական չափորոշչում և ծրագրերում առանձնահատուկ ուշադրության է արժանացվում արժեքային համակարգը, այն դիտարկվում է առանձին կետերով:

Գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի,պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման և զարգացման գործում: Սովորողը, հայոց լեզվից, գրականությունից գիտելիք, հմտություններ ձեռք բերելով, ուսումնասիրում է իր մայրենի լեզուն՝ որպես իր արժեքների բացահայտման և դրսևորման, հաղորդակցման և համագործակցության, այլ ոլորտներից գիտելիք ձեռք բերելու, օտար լեզու սովորելու անփոխարինելի միջոց: Գրականության դասերի ուսումնառության ընթացքում ձևավորվում է որոշակի վերաբերմունք և դիրքորոշում հայեցի ոգու, ազգային արմատների պահպանման և ամրապնդման համար, ինչպես նաև հնարավորություն է տրվում խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը: Ազգային ոգին և մշակույթը արժևորելու, գնահատելու,պահպանելու, հաջորդ սերնդին փոխանցելու պատրաստակամությամբ և գործուն մասնակցությամբ դաստիարակում է հայրենասեր, պետական մտածողություն ունեցող, օրինապահ, բարեկիրթ, զարգացած անձնավորություն, որ պատրաստ է սովորելու ողջ կյանքի ընթացքում:

Չափորոշիչն ու ծրագրերը տալիս են այն հնարավորությունը, որ ստեղծենք ուժեղ, զարգացած, աշխարհի ամենահիմաստալից կրթական համակարգը՝ իր բարձր արժեքներով:

21-րդ դարում հանրակրթությունը նպատակ ունի կրթելու և դաստիարակելու որոշակի կարողունակություններով օժտված հայ քաղաքացի:

Գրականությունը խոսքի արվեստ է: Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելիքը, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները,պատկերավոր խոսքի գեղագիտությունը: Գրական տեքստի համակողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի

քննական-դատողական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը: Այսպիսով՝ գրականության ուսումնասիրության նպատակը սովորողին խոսքի գեղագիտությանը,խոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է: Գրականության ուսումնասիրումը մարդու հոգեբանությունը բացահայտելու միջոց է: Գրական երկից քաղած դասերի շնորհիվ սովորողը կարողանում է կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ, համատեղ աշխատել, ստեղծել նյութական և հոգևոր արժեքներ՝ հանուն հայրենի պետության, հանրության բարօրության:Գրականության դասերին զարգանում և կատարելագործվում են «սովորողի անձնային նկարագիրը, վերաբերմունքը կամ դիրքորոշումը իր երկրի,պետության, ազգային արժեհամակարգի, սեփական անձի և կյանքի հանդեպ» (ՀՊՉ):

Հայոց լեզվի և գրականության՝ Հանրակրթության պետական չափորոշչի դրույթների, պահանջների, դպրոցի յուրաքանչյուր աստիճանի կամ ծրագրի համար մշակված վերջնարդյունքների հիման վրա ձևավորվել են հիմնական հասկացություններ և ենթահասկացություններ, որոնց համապատասխան սահմանված են չափորոշչային հստակ պահանջներ կամ չափանիշներ:Հիմնական հասկացություններն են՝

●Հաղորդակցում,

●Ընթերցանություն.գեղարվեստա կան ստեղծագործություն,

●Լեզվական համակարգ,

●Ստեղծարարություն,

●Ինքնություն:

Ամեն հիմնական հասկացություն ունի իր ենթահասկացությունները, որոնք տարբերվում են՝ պայմանավորված առարկայի յուրահատկություններով և ուսումնասիրության պահանջներով, ինչպես նաև դպրոցականների տարիքային առանձնահատկություններով: Հիմնական հասկացություններից ինքնությունը ունի **վերաբերմունք և արժեք** ենթահասկացությունը, որով պայմանավորվում է սովորողի արժեքային համակարգը:

Առարկայական նոր ծրագիրը ներկայացված է աղյուսակների տեսքով, որոնք կազմված են են հետևյալ բաժիններից՝

1.Առարկան, տարեկան ժամաքանակը,

2.Թեման,

3.Նպատակները,

4.Վերջնարդյունքները,

5.Բովանդակությունը,

6.Առաջարկվող գործունեության ձևերը,

7.Խաչվող կամ ընդհանրական հասկացությունները,

8.Միջառարկայական կապերը,

9. Կապը հանրակրթական պետական չափորոշչի տվյալ ծրագրի վերջնարդյունքների հետ։

Ըստ առարկայական նոր ծրագրի՝ թեմաները դասակարգված են հետևյալ սկզբունքով.

ԹԵՄԱ 1

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

1.Եղիշե Չարենց. Ես իմ անուշ Հայաստանի,Հայրենիքում,Տաղ անձնական

2.Նաիրի Զարյան. Հայրենի տուն

3.Հովհաննես Շիրազ . Թագադրում,Հայ ժողովրդի երգը

4Համո Սահյան. Անտառում,Անունդ տալիս,Մասրենի

5.Սիլվա Կապուտիկյան. Քելե ',լաո

6.Պարույր Սևակ. Քիչ ենք, բայց հայ ենք, Հայաստան, Ծնվել եմ

ԹԵՄԱ 2

ՊԱՏՄՎԱԾՔ

1.Դ.Դեմիրճյան. Ավելորդը

2.Ա.Բակունց. Սպիտակ ձին

3.Մ.Գալշոյան. Մամփրե արքան

4.Հ.Մաթևոսյան. Կանաչ դաշտը

5.Վ.Սարոյան. Նռնենիները

ԹԵՄԱ 3

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՊ

1.Զ.Եսայան.Սիլիհտարի պարտեզները

2.Վ.Թոթովենց. Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա

3.Ս.Զորյան. Մի կյանքի պատմություն

4.Գ.Մահարի. Պատանեկություն (հատված)

Բոլոր թեմաների բովանդակությունը կազմվելիս հաշվի են առնվել սովորողի տարիքային առանձնահատկությունները, հոգեբանությունը, համակարգված լեզվամտածողությունը: Դասագրքից քաղած դասերի շնորհիվ զարգանում են սովորողի նյութական և հոգևոր արժեքները: Հայ և համաշխարհային նմուշների իմացությունը

սովորողի համար պետք է դառնա որպես սեփական անձի ինքնաճանաչման և զարգացման կարևոր պահանջ:

2. ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱԳԻՐՔԸ

Մեր հետազոտական աշխատանքի ուսումնասիրության առարկան 7-րդ դասարանի գրականության դասագիրքն է, որը կազմված է նոր չափորոշչով, նոր ծրագրով: Դասագրքի հեղինակներն են Ա.Նիկողոսյանը և Ա.Վարդանյանը:

Դասագրքում ներկայացված թեմաները դասակարգված են հետևյալ կերպ.

●հեղինակ,

●կյանքը և ուսումնառություն,

●ստեղծագործություն,

●ընտրված բանաստեղծություն կամ պատմվածք:

Ընտրված նմուշների ուսումնասիրության միջոցով սովորողները ծանոթանում են գրականության տեսության եզրույթներին՝ գրական սեռեր, ժանրեր, դիպաշար՝ բաղկացուցիչ մասերով և այլն: Օրինակ՝

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՏԱՂ ԱՆՁՆԱԿԱՆ

Դասագրքում ընդգրկված 15 հեղինակներն իրենց ստեղծագործություններով դասակարգված են այդ սկզբունքով:

Բոլոր դասերի համար ներկայացված են հարցեր, որոնք տրամաբանական են, մատչելի, համապատասխանում են սովորողների լեզվամտածողությանը, հնարավորություն տալիս սովորողին բազմակողմանիորեն ծանոթանալու թեմաներին: Նկարազարդումները տպավորիչ են, ունեն գեղագիտական արժեք:

7-րդ դասարանի գրականության այս դասագիրքը նման չէ նախորդներին: Դասագիրքը եռաստիճան է՝ նախատեսված բարձր և միջին ունակությունների տեր երեխաների համար:

SS լուծմամբ դասագրքի յուրաքանչյուր էջում կան QR կոդեր, որոնք ուղղորդում են աշակերտին դեպի համապատասխան կայք: Սովորողը անմիջապես QR կոդի միջոցով կարող է լսել պատմվածքը կամ բանաստեղծությունը,համապատասխան երաժշտություն լսել տվյալ ստեղծագործության հիման վրա,թեմայի հետ կապ ունեցող ֆիլմեր դիտել: Բանաստեղծության և պատմվածքի ընթերցանության և քննարկումների համար մշակված է հատուկ ռազմավարություն, ինչը կարևորում և զարգացնում է դպրոցականների արժեքային համակարգը:

Նոր դասագիրքը ապահովում է ոչ միայն կրթության նոր որակ, այլ նաև արժեքային համակարգի ձևավորման առումով մանկավարժական հստակ մոտեցում: Յուրաքանչյուր դաս դիտելով նաև իբրև արժեքային պաշարների հարստացման աղբյուր՝ գրականության ուսուցիչը, հետևելով դասագրքի թելադրանքին, կկարողանա սովորողի մեջ ձևավորել համոզմունքների, սկզբունքների և չափանիշների մի համախումբ, որոնք առաջնորդում և պայմանավորում են անհատի վերաբերմունքը, վարքագիծը և որոշումների կայացումը: Այն ներկայացնում է մարդու հիմնարար համոզմունքներն այն մասին, թե ինչն է կարևոր, ցանկալի և բարոյապես ճիշտ կամ սխալ: Խնդրո առարկա դասագրիք մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանում ընդգրկված թեմաներն ու ստեղծագործությունները թույլ են տալիս **Գրականություն** առարկայի ուսուցման ընթացքում սովորողների մեջ ձևավորելու տարաբնույթ արժեքներ, որոնք ներկայանցնում ենք ստորև.

1. **Բարոյական արժեքներ,** որոնք վերաբերում են ճշտի և սխալի, լավի և վատի, ինչպես նաև էթիկական վարքագծի հասկացություններին: Դրանք աշակերտների համար ուղեցույց են հանդիսանում ուրիշների հետ փոխհարաբերությունների ժամանակ և ընտրություն կատարելիս:

2. **Գեղագիտական արժեքներ,** որոնք կապված են գեղեցկության, ստեղծագործականության և գեղարվեստական արտահայտման հասկացությունների հետ: Գեղագիտական արժեքներն ազդում են արվեստի, երաժշտության, գրականության նախասիրությունների վրա, ինչպես նաև բնական կամ տեխնածին գեղեցկության գնահատման վրա:

3. **Հոգևոր կամ կրոնական արժեքներ**, որոնք ներառում են համոզմունքներ, որոնք կապված են գոյության, նպատակի և ավելի բարձր ուժի՝ Աստծո հետ: Հոգևոր արժեքները կարող են ապահովել կյանքի իմաստի և նպատակի զգացում:

4. **Ճանաչողական արժեքներ**, որոնք վերաբերում են գիտելիքների ձեռքբերման և քննադատական մտածողություն ունենալու կարևորությանը: Դրանք ընկած են ուսման, խնդիրների լուծման և որոշումների կայացման նկատմամբ մարդու մոտեցման հիմքում:

5. **Մշակութային արժեքներ,** որոնք մշակութային որոշակի խմբին հատուկ հավատալիքները, սովորույթները, ավանդույթներն ու նորմեր են: Նրանք ազդում են վարքագծի և սոցիալական փոխհարաբերությունների վրա:

6. **Ազգային արժեքներ,** որոնք վերաբերում են անձի էթնիկ ծագման հետ կապված արժեքներին և համոզմունքներին: Դրանք կարող են ներառել լեզուն, սովորույթները, ավանդույթները և մշակութային ժառանգությունը:

7. **Անձնական արժեքներ**, որոնք անհատականացված համոզմունքներն ու առաջնահերթություններն են՝ յուրահատուկ յուրաքանչյուր մարդու համար: Դրանք կարող են ներառել նախապատվություններ կոնկրետ գործունեության, հետաքրքրությունների և ապրելակերպի ընտրության համար:

8. **Սոցիալական արժեքներ**, որոնք վերաբերում են հասարակության, համայնքի և ուրիշների բարեկեցության նկատմամբ անհատի վերաբերմունքին: Դրանք հաճախ ներառում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը և ընդհանուր բարօրությանը նպաստելու պատասխանատվությունը:

9. **Բնապահպանական արժեքներ,** որոնք արտացոլում են անհատի համոզմունքներն ու վերաբերմունքը բնական աշխարհի նկատմամբ և շրջակա միջավայրի պահպանման և պաշտպանության կարևորությունը:

10. **Տնտեսական արժեքներ,** որոնք վերաբերում են փողի, հարստության և ֆինանսական հաջողության մասին համոզմունքներին: Նրանք ազդում են ծախսերի, խնայողությունների, ներդրումների և տնտեսական մասնակցության վերաբերյալ որոշումների վրա:

Մանկավարժական հմտությունների շնորհիվ տվյալ դասարանում վերոնշյալ արժեքների ձևավորման համար ուսուցման կազմակերպման տարբեր ձևեր կարելի է ընտրել: Առավել արդյունավետ եղանակը խմբային աշխատանք իրականացնելն է, որի ժամանակ մանկավարժական հնարները թելադրում են աշակերտներին հարգանքով և ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին հաջողության հասնել: Հասակակիցների խմբում սովորողն իրեն ավելի ազատ և անկաշկանդ է զգում, իսկ անհատական աշխատանքում ձևավորվում և զարգանում են ինքնակազմակերպման, ինքնավերահսկման ընդունակությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մեր հետազոտությունը կենտրոնացել է ՀՊՉ-ի, առարկայական չափորոշչի, ծրագրերի և հատկապես 7-րդ դասարանի գրականության դասագրքի վրա, որը մշակվել է նոր չափորոշչին և ծրագրերին համապատասխանելու համար: Ա.Նիկողոսյանի և Ա.Վարդանյանի հեղինակած այս դասագիրքն աչքի է ընկնում գրականության դասավանդման նորարարական մոտեցմամբ:
- Կարևոր է, որ մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ այս դասագիրքը անգնահատելի գործիք է ծառայում սովորողների արժեհամակարգերի ձևավորման համար: Այն ներկայացնում է մանկավարժական մոտեցում, որը դուրս է գալիս ավանդական կրթությունից՝ շեշտը դնելով համոզմունքների, սկզբունքների և չափանիշների մի շարք ձևավորելու վրա, որոնք ձևավորում են անհատական վերաբերմունքը, վարքագիծը և որոշումների կայացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 (հասանելի՝ 05.11.2023 թ.):
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Մայրենի» 1-6-րդ, «Հայոց լեզու» 7-12-րդ, «Գրականություն» 7-9-րդ եվ «Հայ գրականություն» 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176068, (հասանելի՝ 05.11.2023 թ.):
3. Նիկողոսյան Ա., Վարդանյան Ա., Գրականություն: Հանրակրթության դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, https://ebooks.bonee.net/books/brph/#p=1 (հասանելի՝ 05.11.2023 թ.):